


Տարեկան գին և Պոլսոյ Կոնստանտնուպոլսոյ 4 ՄԷԶ
Հարկաւորաց և Պոլսոյ 3 ՄԷԶ
Իւրաքանչիւր թերթի գին 60 գրչ
Կոնստանտնուպոլսոյ մէկ անգամի հա-
մար 3 դուրուշ, արկու անգամի հա-
մար 2 դուրուշ, և եւր անգամի հարկ
համար զատ անգամի հարկիւն պիւ-
լայ :



ԼՐԱԳԻՐ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ ԵՒ ՏՆՏԵՍԱԿԱՆ

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ 3 ԱՊՐԵԼ

ՔԱՂԱՔԱԿԱՆ

Ազատամբողիկներ՝ փոխանակ վեր-
ջանալու՝ կերել թէ դարձեալ ճա-
շակ գտնելու վրայ է : Պոմոսայէն ե-
լած պաշտօնական հեռագրաւոր
մը, զոր վարը կը հրատարակենք,
Սափա գետին Աւարտական եղեր-
քէն եկող հաղարի չափ ապստամ-
բաց պարտութիւնն ու ցիրեցանք
լալը կը ծանուցանէ : և Հէրսէքի
կողմէն ալ զինադուրը կը վերջանայ
առանց արդիւնք մ'ունենալու : Կը-
ուի թէ Հէրսէքի գործադիր ժողո-
վին նախագահ վաստ էֆէնտի ալ,
որոյ պաշտօնն էր գլխաւորապէս պա-
տըսպարելոյ վերադարձին հսկել,
հրաժարեր է, անշուշտ գործին ան-
կարելիութեան պատճառաւ :

Եւրոպական լրագրերէն ոմանք,
տէրութեանց հաշտարար ջանքն ան-
յաջողութիւնը խոստովանելով, կը
յարեն թէ 'ի մօտոյ' եթէ ոչ մեծ
պատերազմ մը՝ յորմէ ամեն արքու-
նիք խուսելու կը փոփաքին, գոնէ
կարեւոր դէպքեր կ'ապստանին : Ինչ
պիտի ըլլան այս դէպքերն, առ այժմ
չենք կրնար որոշակի գիտնալ : Եթէ
գուշակութիւննիս սխալ չէ, ուրիշ
բան չեն կրնար ըլլալ, բայց եթէ ա-
պստամբաց հետ եղած բանակցու-
թեանց խղճմն, և ապստամբու-
թեան չարունակութիւնն, որոյ վախ-
ճանն այս ընթացքով անորոշաբար
կերկարաձգի, մանաւանդ որ, եթէ
լուրերը սխալ չեն, Պիլէքի կողմէն ալ
մարդասպանութիւններ պատահած
են եղեր :

Հեռագիրը կը ծանուցանէ թէ Պ.
Վէստէքիքի անուն Ռուս պաշտօնա-
տար մը՝ իբրեւ փոխանորդ Հէրսէքի
ապստամբաց՝ Դաղմատիոյ կառա-
վարին հետ տեսակցութիւն մը պի-
տի ընէ : Ետոյ Վիէննա, Բեդրես-
պուրկ և Կ. Պոլսու ուղևորելով ա-
պստամբաց պայմաններն երեք տէ-
րութեանց պիտի ծանուցանէ, և Բ.
Դրան շնորհած բարենորոգմանց գոր-
ծադրութեանը մասին երաշխաւո-
րութիւններ պիտի առաջարկէ եղեր :
Այսպիսի պաշտօն մը՝ ըստ մեզ
անսովոր կերելի, ուստի ստոյգը գիտ-
նալու համար՝ հարկ կըլլայ տակա-
ւին ուրիշ լուրերու սպասել :

Կըսուի թէ Դաղմատիոյ կառա-
վարին ապստամբաց հետ ըրած բա-
նակցութեանց մէջ իւր առած հրա-
հանգաց համեմատ վարուած չըլլա-
լով, Վիէննայի արքունիքը նորէն
հրամայեր է անոր որպէս զի ապրու-
տամբոց ծանուցանէ թէ տէրու-
թիւնները Բ. Դրան շնորհած արտօ-
նութիւնները գոհացուցիչ կը համա-
րին, և ապստամբութեան երկարա-

ձրգուելուն հաւանութիւն չեն կը-
նար տալ : Աւարտ—Հունգարական
տէրութիւնն իւր սյսնոր հրահանգ-
ները Վիէննայի Օսմանեան դեսպան
վսեմ՝ Արիֆի փաշային և մայրա-
քաղաքիս Աւարտ—Հունգարական
դեսպան Զիլի կոմսին միջոցաւ տը
Բ. Դրան յայտներ է : Բայց մինչև
ցարդ այսպիսի յայտարարութիւններ
չատ եղան առանց մեծ օգուտ մը
տեսնուելու :

Անգղիոյ արտաքին գործոց նա-
խարար Լորտ Տէրպի փարիզ գալով
Գաղղիոյ արտաքին գործոց նախա-
րարին հետ երկար բանակցութիւն-
ներ ու խորհրդակցութիւններ ըրաւ,
որոց վրայ երկու նախարարք իրա-
րու հետ համաձայնեցան, և Լորտ
Տէրպի Լոնտրա վերադարձաւ : Կը
կարծուի որ այս խորհրդակցութիւ-
նըն Եգիպտոսի երմտական վիճակին
նկատմամբ եղած է : Ինչպէս յայտ-
նի է, Խաթիվին երմտական ալ հա-
ւասարակցութիւնը կորուսած է Ե-
րոպայէն ըրած հետզհետէ փոխա-
ռութեանց վրայ, որոց ապրիլի չըտ-
րոններուն վճարումն յետաձգելու
պարտաւորեցաւ, և այս պատճառաւ
Աղէքսանդրիոյ Պօրտսիլին մէջ Խաթիվին
դէմ յայցեր ծագեցան :

Անգղիոյ յատուկ պաշտօնատար-
ներ զրկած էր Խաթիվին երմտական
վիճակը քննելու և բարեւեղելու հա-
մար, և առանց տեղեկագիրն յոյս
կուտար որ Եգիպտոսի եկամուտներ-
ըն իւր ծախսոց և պարտոց վճա-
րումներուն պիտի բաւեն : Կըսուէր
նաեւ թէ Եգիպտական փոխառու-
թիւն մը յաջողութիւն գտնելու
վրայ է փարիզի մէջ : Ուստի, չենք
հասկնար թէ ինչ պատճառաւ Ե-
գիպտական կառավարութիւնն ալ
մէկէն 'ի մէկ իւր վճարումներն յե-
տաձգելու պարտաւորեր, և արեւ-
մլտեան երկու մեծ տէրութեանց
արտաքին գործոց նախարարներն ալ
անձամբ տեսակցելով համաձայնելու
հարկ տեսեր են : Այս ալ արդեօք
ժամանակիս նշաններէն մին համա-
րելու է :

Ռուսիոյ կայսեր օգափոխութեան
համար ուղևորութիւնը կը հաստատ-
ւի : Աղէքսանդր Բ. Գերմանիոյ էմ-
քաղաքը պիտի երթայ և Կորչաքոֆ
իշխանն ալ քով պիտի գտնուի, բայց
չենք գիտեր թէ ուրիշ վեհապետաց
հետ ալ տեսակցութիւն պիտի ընէ :

Կեդրոնական Ասիոյ մէջ, Ռուսիոյ
աշխարհակալած թուրքապետանի գա-
ւառին առժամանակեայ ընդհանուր
կառավարիչ Բօլքաքովսքի զօրավա-
րը փետրվարի 15ին յաղթանակաւ
Խօքանտ մտաւ : Տեղւոյն հեռառու-
րութեանը պատճառաւ այս լուրը
դեռ նոր հասած է Բեդրեսպուրկ,
քանզի Ռուսք տակաւին Խօքանտէն

մինչև ուրիշ Ռուսական երկիրներն
հեռագրական թիւ հաստատած չեն :
Յիշեալ զօրավարը քաղաքին գուռն
ընդունուեցաւ : Ֆէրդանայի պոսինքն
Խօքանտի գաւառին կառավարիչ
Աքօպէլէվ զօրավարին կողմէն, որ
իւր զօրաց գլուխը կ'եցած էր : Քա-
ղաքին բնակչաց կողմանէ ալ պատ-
գամաւորութիւն մը կազմուած էր
Քօլքաքովսքի զօրավարին արժանա-
վայել ընդունելութիւն մ'ընելու հա-
մար : Այս անձն իւր շնորհակալու-
թիւնը զօրաց յայտնէ իւր, քա-
ղաքին պատգամաւորաց ուղղեց իւր
խօսքն և ծանոյց անոնց թէ Ֆէրդա-
նայի գաւառը Ռուսիոյ հետ միացած
է : Պատգամաւորք Ռուսիոյ կայսեր
կամքը մտիկ ընելէ ետէ՝ պատաս-
խանցին : «Աստուծոյ կամքն ըլլայ,
մեծ է Աստուած» : Ետոյ Սպիտակ
Ձալին՝ այն է Ռուսիոյ կայսեր հա-
մար բարեմաղթութիւններ ըրին :

Անգղիոյ թագուհւոյն Գեորգինիա
ուղևորութիւնը ծանուցեր էինք :
Թագուհին այժմ Պատէն կը գտնուի,
ուր իւր հանդուցեալ քրոջ իրեն կը-
տակած փոքրիկ ամարանոցը կը բը-
նակի, և քրոջը դամբարանին ալ
այցելութիւն մը պիտի ընէ եղեր :
Այս դամբարանին իւր քեռորդուհոյն
ձեռագործն է, որ իւր պարագոյ ժա-
մերը քանդակագործութեամբ կ'ան-
ցընէ : Վիլքոքիս թագուհին, որ մին-
չև ապրիլի 6ը Պատէն պիտի կենար,
և անկէ ալ Բօլքաքովսքի պիտի երթար
հանդուցեալ ամանոցն ամարանոցին
այցելութիւն մ'ընելու : Քէնթի կոմ-
սուհի անուան ներքեւ ծպտեալ է,
և իւր հետ գտնուող անձինք քա-
ռասուն և ութ հոգի են :

Յունաստանի դատաւորական
բարձրագոյն ասեանք՝ դատաւորանի
ենթարկուած նախորդ երկու նախա-
րարաց դատաւիճիւր տուաւ, որք
ինչպէս յայտնի է՝ իրեւ կաշառակուլ
ամբաստանուած էին : Ասոնցմէ Պ.
Վալասուրուս տարի մը բանտարկու-
թեան և երեք տարի քաղաքական
իրաւունքէ զրկուելու դատապար-
տեցաւ, իսկ Պ. Նիքօքուրուս միայն
վեց ամիս բանտարկութեան : Բայց
հեռագիրը չ'ծանուցաներ թէ այս
անձանց առած կաշառքներն ինչ
պիտի ըլլան : Ահա այսպէս Յունաս-
տան առաջին օրինակ մը տուաւ
սահմանադրական վարչութեան օգ-
տակարութեան, որ հաստատակաց
պաշտօնեայներն օրինաց և արդա-
րութեան ենթարկելով՝ բարուց ա-
պականութիւնը կ'արգելու, և հա-
սարակաց ինչքն ու գանձն իշխանու-
թեան վրայ գտնուողներուն որկո-
րէն կը պահէ :

Հապէշաց թագաւորին հետ պա-
տերազմից Եգիպտական զօրաց հը-
րամանատար Բաթիպ վաշային մարտ

25 թուով առ Բարձր Խաթիվն զը-
կած մէկ հեռագիրը կը ծանուցանէ
թէ խաղաղութեան կնքուելը քանի
մ'օր ետ մնացած է, և ատոր պատ-
ճառ կը համարուի Հապէշաց գլուխ-
ներէն ոմանց Յօհաննէս Բասսա թա-
գաւորին դէմ ապստամբելը : Ասոր
վրայ թագաւորը խնդրեց Բաթիպ
վաշայէն որ թող տրուի իրեն Եգիպ-
տական զօրաց գլխերուն մէջէն անց-
նելով իւր Աստու մայրաքաղաքն եր-
թար, և հօն իւր զօրաց բանակն ու
զինուորական միջոցները վերակազ-
մելով ապստամբութիւնը զոպել Մի-
անգամայն խնդրեր է որ Եգիպտա-
կան բանակէն բարձրատիճան անձ
մը լիազօր իշխանութեամբ իւր հետ
Ատուա երթայ հաշտութեան պայ-
մանները կնքելու :

Վերոյիշեալ հեռագիրն այս տե-
ղեկութիւնները տալէ ետէ՝ կըսէ
թէ Հապէշաց թագաւորին բանա-
կին վրայ կրնայ մէկը գաղափար մ'ու-
նենալ երբոր գիտնայ թէ վերաւոր-
եալներն հոն արեւուն դէմ պառկած
կը կենան, և իրենց գեղերը չեն
փոխադրուիր, որպէս զի որտաբե-
կութիւն չպատճառեն : Մեռեալ-
ներն ալ հոն բանակին մէջ կը թաղ-
ուին :

Ամենէն աւելի թագաւորը վըհա-
տեցնողն իւր Ռաու-Պարօ վեղերին
մահն եղած է : Այս մարդն՝ որ թա-
գաւորին ալ բազուկն էր, պատե-
րագին մէջ վերաւորուելով մեռաւ,
և տեղը պարագայ մնացած է : Թա-
գաւորը զօրաց սիրտը բուրսովին չը
վհատեցնելու համար Ռաու Պարօի
մահը ծածուկ պահեր է, և չիմաց-
ուելու համար իւր (թագաւորին)
Վրանին մէջ թաղել տուեր է :

ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

Ալէքսանդրիոյ 9 ապրիլ
Եգիպտական Պօնօ ունեցողներն ազ-
մեկալից ցոյց մ'ըրին : Անկի խաթիվ, անկ-
ցի երւմտից նախարարը, գոչեցին : Ժո-
ղովուրդն յաւելաւ է :

Փարիզ 10 ապրիլ
Լորտ Տէրպի և Տըքազ դուքսին մէջ
երէկ տեղի ունեցած խորհրդակցութեամբ
Անգղիոյ և Գաղղիոյ համաձայնութիւնն
ամրապնդեցաւ : Այս երկու նախարարք
երէկ իրիկուն Լորտ Լայնսի տալարանքը
հաչեցին և յետոյ վերստին խորհրդակ-
ցեցան :

Լոնտրա 10 ապրիլ
Լորտ Տէրպի այս իրիկուն Լոնտրա
վերադարձաւ :

Փարիզ 10 ապրիլ
Երեսփոխանաց ժողովը Պ. Ռուէի Ա-
յաքսիօնն ստացած ընտրութիւնն ոչնչա-
րուց : Բայց Պ. Ռուէ արդէն Ռիօնն ալ
ընտրուած ըլլալով, այս վերջին ընտրու-
թիւնը վաւերացած էր :

Հոտմ 10 ապրիլ
Բոլոր նախարարք վերստին ընտրուե-
ցան : Կարիպալտի մէկ նամակը կը յայտ-

Նէ թէ ազգին կողմանէ իրեն եղած 400, 000 ֆրանք ընծայն կընդունին, բայց կաւելցնէ թէ այս գումարը Տիւրքիա գետը կանոնաւորելու համար ձեռնարկուելիք աշխատութեանց պիտի գործածէ:

Մարտի 10 ապրիլ
Արթուր թաղաւորն արուեստահան դէպիս առթիւ ատենախօսութիւն մը ըրաւ:

Գաւիթէ 10 ապրիլ
Ապրիլ 10 ին վճարելի գանձային Պօնոնները վճարուեցան:

Անդրիայի գործակալը Հիմա մասնաւորապէս հարկաց հաւաքման վերաբերեալ խնդրոց քննութեան կ'ըրազին: Անդրիական կարդ աղբիւր թեան մը համեմատ:

Աւերակներ 10 ապրիլ
Երկու օրէ 'ի վեր տիրող յուզմունքը հանդարտի կ'սկսի: Պօրտայի միջնորդներն և կառավարութեանն արհաւիր ունեցողները խիստ լաւ ընդունելութիւն գըտան Ռուսիոյ, Գաղղիոյ և իտալիոյ հիւպատոսներէն: Բաղդէներ տրուեցան Անգլիոյ հիւպատոսին:

Վիլնիւս 11 ապրիլ
Բէշթայի Լյուս լրագիրը կը հաւատարմութեան թերթներէն արտատպւոյ յաւաք զբաժնի պայմանները կը մերժեն: Նկատելով որ Թուրքիոյ վեհապետական անընդհանրաբար հակառակ են և հեռաւոր չեն կրնար նկատողութեան տուել: Յիշեալ լրագիրը կուելցնէ թէ տեղութիւնը հաւանականաբար վերստին հրաւեր պիտի կարգան ապրտամբաց որ վէճը վար դնեն:

Փարիզ 11 ապրիլ
Երեսփոխանական ժողովն երեք ընտրութեանց օրինակութիւնն ստուգելու գործն և ներդրութեան վերաբերեալ փոփոխութիւնը պարագայութեն և երբ թողով, մինչև մայիս 10 փակեց իւր նիստերը:

Լոնտոն 11 ապրիլ
Հասարակաց խորհրդարանը մինչև ապրիլ 26 փակեց իւր նիստերը:

Նիւ Եօրք 11 ապրիլ
Բիո—Կրանտի մէջ՝ Ամերիկայի Միացեալ Նահանգաց և Մէքսիկայի զօրքերը կուր իսնուեցան միմեանց հետ:

Աթէնք 12 ապրիլ
Բարձրագոյն ատենադ. Պատրասի Զանթայի և Արդիլիոյ եպիսկոպոսներէն կաշառք տանող նախորդ նախարարաց և անոնց գործակիցներուն դատատանն աւարտելով՝ հետեւալ վճիռը տուաւ:

Պ. Պարասօրու Նախարարը մէկ տարի ընտանաբնութեան և քաղաքական իրաւունքներէն զրկուելու և 56000 տըրակի տուգանք վճարելու դատաւարութեան:

Պ. Նիքօթօրու Նախարարը տասն աւիս ընտանաբնութեան և Պ. իքօնօփօրու չորս ամիս ընտանաբնութեան Պ. Հարիթի ալ երկու ամիս ընտանաբնութեան դատաւարութեան:

Իսկ կաշառատու Բօնիօթէրա եպիսկոպոսը 30000 տրակի, Ալեքքիս եպիսկոպոսը 22500 տրակի, և Արիլիստոյ եպիսկոպոսը 20000 տրակի տուգանք վճարելու դատաւարութեան համեմատաբար, միանգամայն դատաւարութեան ծախքերը պիտի վճարեն:

Փարիզ 12 ապրիլ
Օսմանեան Պանդան պաշտօնապէս ծանոց թէ Եգիպտական կտրոնները պիտի վճարէ:

Անկարէն ապրիլ 6 թուով լուր կուտան թէ Բէրաթի մէջ նոր խափութիւնը ծագելու են:

Պուրթէ 12 ապրիլ
Երեսփոխանական ընտրութեանց պատճառաւ նախարարը հրաժարական տուին:

Վիլնիւս 13 ապրիլ
Քօնկարօնտան Բօնիօթէրա լրագիրն շէրթի խաղաղագոյն նկատմամբ Աւստրիոյ և Ռուսիոյ կառավարութեանց մէջ անհամաձայնութիւն ծագած ըլլալու զըրոյցը սուտ կը հանէ:

Վիլնիւս 14 ապրիլ
Կէս պաշտօնական լրագիրը երեք կայսերաց դաշնակցութիւնն անսպալելի կը համարեն:

Զաւա 14 ապրիլ
Գաղմատի կառավարիչ Պ. Ռօտիշ

Յէլա-Մարաշիտան յայտարարութիւն մը հրատարակելով շէրթի ապստամբներն իրենց քննակարանները վերադառնալու հրաւիրեց:

Փարիզ 14 ապրիլ
Կը հաւատան թէ Ռուսիոյ դեսպան Օրթօ կոմսն հաստատել է թէ խաղաղութիւնը չպիտի վերադառնայ:

Աթէնք 14 ապրիլ
Թիւրքիոյ մէջ ծագած ապստամբութիւնը զարգացաւ:

Բեղրադուրէ 14 ապրիլ
Կոյս լրագիրն շէրթի մէջ հանրագործի գործողի յանձնարար մը հաստատելու առաջարկութիւնը կը պաշտպանէ:

Գաւիթէ 14 ապրիլ
Պօրտայի Բօնիօթէրան պահանջմանցը քիչ ատենէն լուծում պիտի արուի:

Փարիզ 14 ապրիլ
47 դաւտապետ փոփոխեցան:
Երկուրէն 'ի վեր ստատիկ ցարտ կայ և ձիւնը կը շարունակէ:

Լոնտոն 13 ապրիլ	
Բաւար. Բան.	14
Բան.	1865 47
»	1869 45 1/4
»	1871 23 1/4
»	1872 25 1/2
»	1873 45
Եգիպտ.	46 1/2
Անգլ. Բան.	9 5/8
Լիւքսեմբուրգ 13 ապրիլ	
Բաւար. Միացիւն—Օրթիւն	6 5/8
»	Ֆար Զօրքահ
»	4 5/8
Թաթարս 7000 հալ:	

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Կայսերական հրամանաւ՝
Տէֆթէրհանէի վերադառնալ Ղալիպի պէս վեղիւրութեան անտիճանաւ երաւոյն նախարար անուանեցաւ: Գիտական Եւստօֆ փաշային, որ Տէֆթէրհանէի վերադառնալ անուանեցաւ:

Ֆէրիք Հասան փաշան Սպարապետի գրան Մատակարարութեան (Լէվալիմ) խորհրդին նախագահ անուանեցաւ: Գիտական վարժանաւ Հաֆթը փաշային:

Հայտարար էֆէնտիւն 20 մարտ թուով Բ. Գուռն եկած հեռագիր մը կը ծանուցանէ թէ Սալիմ Բեքին եղբորը, Գալիպի մէջ ժամ հետի, երեք ու կէս ժամ պատերազմ մ'եղեր է Օսմանեան զօրաց և հաղորդի չափ ապստամբաց մէջ, որք գետին միւս եղբորէն եկած էին: Զօրքերն երեք մեռեալ և վեց վիրաւոր ունեցեր են: Իսկ ապստամբը հարիւր խառնի չափ մեռեալ և նոյնչափ մ'ալ վիրաւոր ունենալէ ետեւ 'ի փախուստ դարձեր են: Զօրքերէն հալածուելով ապստամբաց մէկ մասը նաւակներով գետին Աւստրիական եղբորը դարձեր են: Մնացածներն ալ լեռներն ապստամբներ են: Հոնեղ դառնաւ պահականոցին հրամանատար Գալիմա գամ Բէրիֆ էֆէնտիւն լուր կուտայ թէ բաւական զօրք զրկել է լեռները ցրուած ապստամբները հալածելու համար:

Կայսերական Մէվլիտ-Նուրէթթին չոքեշարփ քորվէթն այսօր վաղը պիտի մեկնի մայրաքաղաքէն զօրք և ազգամթերք տանելով 'ի Բլէք:

Կը լսենք թէ Օսմանեան թղթատարութեանց ընդհանուր անուշ Վիթալիս էֆէնտիւն հանրազգային թղթատարութեան երկրորդ անօրէն անուանեցաւ: Թղթատարութեանց վաղեմի պաշտօնատար Գրիգոր էֆէնտիւն տեղական թղթատարութեան տեսուչ անուանեցաւ:

Զայաք անուն թուրքերէն ծագող թերթին՝ Հէյալ ծագող թերթին լատինական վրաց հրատարակած ան-

վայել ծագողներին պատճառաւ երեք ամիս դադարեցաւ:

Երուսաղէմէն մարտ 20 թուով գրուած նամակ մը լուր կուտայ թէ մինչև այն օրն 3000 չափ ունեցող արք. գնացեր են հայ, յայն, սիրիացի և Եւստ. բայց ուրիշ կարավաններ ալ կ'ապաստին եղեր Եւֆրատէն: Եւրօպացի հարուստ այցելուաց թիւըն այս տարի խիստ չափ է:

Անձրեաց չեղոյթեան պատճառաւ չափ տեղեր սեղմերը չեն բուսած և չափ տեղեր ալ բուսածները չորցեր են: Ոյս պատճառաւ այս տարի արմատաց հունձքն ոչինչ է, և արդէն սոյն զգալի ըլլալ սկսած է: Յորենին չափը 15 զրէն 20 ի ելած է:

Կըսուի թէ կայսերական կառավարութիւնը ծխախոտի Ռէժիմ վերջնելով՝ դաւառաց մէջ 'ի գործ դրուած գրութիւնը մայրաքաղաքիս վրայ ալ պիտի տարածէ, հրաման տալով որ ծխախոտը ծխախոտի գործարաններ բանան, և կառավարութեան ուղղակի տուրք մը վճարելով իրենք շինեն ու վաճառեն:

Կարինէն հեռագրով լուր կուտան թէ դաւառին կուտակ Մէհմէտ Բէշիտ փաշան կարճ հիւանդութեամբ մը վախճաներ է:

Վիտինէն եկած լուրերէն կը հասկըցուի թէ Գանուր Գետը յորդելով բոլոր քաղաքը կոխեր է, և շարունակ ջուրը կը բարձրանայ: Հաղորդուցութիւնը դադարելու և փոփոխութեան մէջ մակայիկներով կը պտտուի: Գաղաքէն փախչել չկրնող բնակիչը պարսպներուն վըրայ ելեր, հոն կը բնակին վրաններու ներքեւ, զորս տեղական իշխանութիւնը տուեր է:

Երեքաթի օրն արքունի նաւարանի գործաւորներն հինգ վեց հարիւր հոգի Բ. Գուռն երթալով աղբարագիւր տուին Մեծ-Եպարքոսին: Եւ հինգ վեց ամէն 'ի վեր տուակ մ'առած չըլլալին և հետեւաբար յետին խեղճութեան վիճակի մէջ ինկած ըլլալին ծանուցանելով՝ չտակ ինդրեցին: Մեծ-Եպարքոսն ալ պէտք եղած հրամանները զրկելով նոյն իրիկուն երկու ամիսական վճարել տուաւ յիշեալ գործաւորաց:

Զօրքաթի օրն ալ փողերանոցի գործաւորներն աղբարագիւր տուին Մեծ-Եպարքոսին, մի և նոյն խնդիրն ընելով:

Պաղտատի դաւառին մէջ ժամտախտն օր քան զօր սաստկանալու վրայ է գ. Բաղդադաբար: Հիլլէհի մէջ մարտ 19 էն մինչև 26 բռնառողներն թիւն եղեր է 114, և մեռեալներուն 56, իսկ Պաղտատի մէջ մարտ 21 էն մինչև 27 բռնառողներուն թիւն է 259 և մեռեալներուն 169: Մարտ 28 ին 74 հոգի բռնուեր և 13 բռնուեր են, 29 ին ալ 56 հոգի բռնուեր և 26 բռնուեր են: Պաղտատի մէջ զրոյց կար թէ Բէրաթի մէջ ալ ժամտախտն սկսեր է:

Յաւօք սրտի կը ծանուցանենք թէ Բ. Գրան արտաքին գործոց պաշտօնատան Արձանագրութեանց դիւանին գլուխ Թօփհանէլեան Նաշիր Գրիգոր էֆէնտիւն՝ յետ կարճատեւ հիւանդութեան մ'իւր մահիւնապոյն կնքեց հինգաթի օրն 'ի հասակի 33 ամոց:

Յուդարիկուրութեան հանդէսն երէկ կատարեցաւ 'ի Գանտիլի 'ի

ներկայութեան բաղմաթիւ պատաւար անձանց, որոց մէջ կային նաև Բ. Գրան բարձրատիճան պաշտօնատարք:

Հանգուցեալ Նաշիր Գրիգոր էֆէնտիւն իւր խոհական և ազնիւ բարութքը զինքը հանգուցեալներուն համակրութիւնը գրուած ըլլալով, իւր առաջադրած մահը ցաւ առաւ ամենուն:

ԴՐՈՄԱԿՆ

Հալաթի 2 ապրիլ

Կտրոններուն վճարման յետաձգումը Եւրօպայի հրապարակներուն վրայ ալ գէշ ազդեցութիւն ունեցաւ, և արժէթութեան շարունակ իջնելու վրայ են, առանց գիտցուելու թէ ուր պիտի գաղբի այս անկումը: Այսօր Օսմանեան Բօնիօթիները 1430 էին: Կըսուի նաև թէ այս անկումը քաղաքական լուրերու պատճառաւ ալ է, որք տակաւին յաջող ելք չունեցան:

Բարձր. Մեծ-Եպարքոսին և օտարազգի սեղանաւորաց մէջ եղած բանակցութիւնները դադար մը կրած կ'երևին: Բայ ռմանց՝ ներկայ արժէթով մը փոփոխութիւնն հետեւեալ կերպիւ պիտի ըլլայ եղեր: Նոր արժէթութեան միօրինակ հարկերին վեցի պիտի ըլլան, և ասոնցմէ հաղարնոց մ'ունենալու համար 8 իրա կանխիկ և 2253 իրա ալ ներկայ Բօնիօթիներէն պիտի տրուի եղեր, կանխիկ տրուելէք ստակն որ փոխառութիւն մ'ըսել է, նոր հաստատուելիք Պանքային գրամագլուս պիտի ըլլայ եղեր: Միակ դժուարութիւնն երկու խառնութեան կէտին վրայ է, որովհետեւ բանակցող օտարազգի սեղանաւորք կառավարիկն որ այս նոր կարգադրութեան համեմատ վճարուելիք տոկոսներուն յատկանալիք հասցիներուն մատակարարութիւնն արժէթով մը տեղերուն կողմէ կարգեալ փոխանորդաց բացարձակ հսկողութեան ներքեւ դրուի:

Օսմ. Պանքան անցեալ յունլարի կտրոններուն վճարումը բողբոջին դադարեցուցեր է:

ԼՈՍԱՆԵՆԻԿԱՅԻՍ	
ԲՕՆԱՅԵ ՌԵՍՈՒՐՏԵ	
2 ապրիլ՝ Բարձր. իրիկուն	14, 32
3 ապրիլ՝ Հալաթի առաջին օրացուեցաւ	14, 28
ժամ 5 ին	14, 4
Կ. Պօլիս 2 ապրիլ	
Դ. Սէթի Լիւն Լայի Բաժնիք Անգլիոյ	2, 35
» Գիտականութեան »	1, 30
Կ. Պօլիս Պանքային »	3, 35
Բրէտի Ժէնէրալ »	2, 35
Բրէտի (Սթրո—Բի) Բ »	—
Կրկնութեան »	39 7/8
Փոլս. 1863 »	84
» 1865 »	84
» 1869 »	78
» 1872 »	26
» 1873 »	76
Թրաւուէլ »	1, 45

ԹՂԹՈՒՅՈՒԹԻՒՆԻ ՄԱՍԻՍ ԼՐԱԳՐՈՑ

ԻՆԵՆԱՅԻՆ ԳՐՈՒԹԻՒՆ

Հաս. Գրատար. Զարդէ, անձեւ. Են. 11

Խմագիր Տէր. Սակեց յառաջ զրկած նամակ Զեր պատեական Մատիս 1787 թուոյն մէջ հիւրընկալած էր, և գոյութեամբ ընթերցող անոր միայն մէկ մասը. իսկ յաջորդութեան տեղոյս լրագրի և նամակի գողերը յաղթաւորած էին, չողենուուն գիշեր ատեն ժամանեկն պատեհ ատիթ գտնելով, Կաղաչի 88 և 89 թիւերը վերջոյն յղել բարեհաճիք 'ի Սարախստ:

Երբ վարժարանաց արդի ցաւալի կառուցութեանը վրայ համառօտութեամբ էի արդ ' խօսքերին մասնաւորութեամբ տեղոյս աղբարագիւր վարժարանին նկատմամբ մէկ քանի չարամիտ ինքնահաւանաց վաղեմի բնութեամբ քանի մը ամիսէ 'ի վեր տեղի ունեցած անցից ձգբիտ նկարագրութիւնը ընենք 'ի հակիրճ:

Հոս գրեթէ յիսուն տուն հայ կայ, որոցմէ վարժատան ծախուց մասնակցելու կարող հազիւ հազ տասնհինգ տուն

